



ՕՐԱԳԻՒ

ԵՎՐՈՅԵՆԻ, ԲՐԵԴՈՒԹՅՈՒՆԻ, ՏԿԱՆՈՒՄՆԻ

ԵՒ

ԲՆԵԿԵՆ ԳԻՏԵԼԵՍ

Ե. ՏԱՐԻ, ԹԻՒ 12.

1847

ՅՈՒՆԻՍ 15.

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԱԽԵԼՈՐԴԱՊԱՇՈՒԹԻՒՆ

Ե.

Ուստի գիտութեան և պրոեւստիւ:

Մատառութեան՝ կախարդութեան  
և աստղագիտութեան ստութեանցը  
վրայ՝ ասկէ առջի չորս յօդուածով  
տեղն՝ ի տեղը ծանուցանելէն վերջը,  
կ'ուզենք այս վերջին յօդուածովս ալ  
իմացնել թէ հին ատենէ մինչեւ հիմայ՝  
ինչպէս փուշու մուշ բաներով ապա-  
գայն գուշակելու գիտութիւն՝ ի գործ  
կը դնէին: Եւ որպէս զի երկայն չըլ-  
լայ, համառօտիւ կը ջանանք միայն  
գլխաւոր հմայութեանց անունն ու  
բացատրութիւննել՝ տեղեկութիւնը  
տալու համար մեր ընթերցողաց, թէ  
ինչպէս հազարաւոր տարիներ անթիւ  
ժողովուրդք ծուխերուն սանկ ու նանկ  
պտղութելէն, կենդանեաց փորոտիքը  
այսպէս կամ այնպէս հանդիպելէն,  
ամներուն այս կամ այն ձեռվդիզուե-  
լէն, և այն, յաջողութիւն կամ ան-  
յաջողութիւն և գալիքը գուշակել  
կարծեր են:

ԱւերաչՄԱՅՈՒԹԻՒՆ. Ալուրով  
ըլլալուն համար այս տեսակ հմայու-  
թեան, այսպէս կոչեցին:

ԱւերաչՄԱՅՈՒԹԻՒՆ. Ալով կ'ընէին  
այս հմայութիւնս, որ կուապաշտից  
մէջ իբրև սուրբ բան մը համարուած  
էր: Ունէ որ սեղանին վրայ աղ դնել  
մոռնային, կամ թէ որ մէկին քունը  
տանէր սեղանին վրայ աղը չվերցու-  
ցած, մեծ պատուհասի նշան էր:

ԱնուանաչՄԱՅՈՒԹԻՒՆ. Արդոց  
յատուկ անուանցը վրայ կերպ կերպ  
գուշակութեանը՝ այս անունը կու-  
տային:

ԱնտեղաչՄԱՅՈՒԹԻՒՆ. Ինչպէս ը-  
սինք՝ այս արուեստս սկիզբն առած ըլ-  
լալով Քաղդեացւոցմէ, քաղդեական  
գիտութիւնք ալ կ'ըսուին: Ոմննք ալ  
օրագաշտին կուտան ասոր գիւտը:  
Այս արուեստիս հիմը ուրիշ բան է,  
բայց եթէ մտացածին կարծիքը, թէ

ամենայն երկնային մարմինք մէյմէկ ազդուութիւն ունին մարդուս և անդամոցը վրայ . զոր օրինակ , արեւ՝ իշխող ըրին ըղեղին , սրտին , աջ աչքին . փայլածուն՝ լեզուի , բերնի , ձեռքերու և ոտից . երեակը՝ թողին , աջ ականջին . լուսնթագը՝ պորտին , կուրծքին , աղիքներուն , և այլն և այլն : Դոյներն ալ զանազան մոլորակաց տակը կը դնէին . սև գոյնը երեակին , կապուտը՝ լուսնթագին , կարմիրը՝ հրատին , ոսկեգոյնը՝ արեւուն , եւ եւ :

**ԲԱԿԱՀԱՄԱՑՈՒԹԻՒՆ .** Պառաւ կնիկները բակլայ նետելով գուշակութիւն կ'ընէին . և այս տեսակ հրմայութիւնը կ'երեւնայ թէ Ացիա և Հայաստան կը գործածէին :

**ԲԱՑԱՀԱՄԱՑՈՒԹԻՒՆ .** Բացերուն արտադրած այլ և այլ ձեւերէն կերպ կերպ գուշակութիւնք կ'ընէին :

**ԳԱՏԱԶԱՆԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Գաւազանով հմայութիւն ընելը խիստ հին ժամանակէ մինչեւ հիմայ եկած է : Եղիպտացիք , Բաբելացիք , Պարսիկք , Ակիւթացիք կը գործածէին , և Արտուքոդոնոսոր այս եղանակաւ իմանալ ուզեց Հրէից հետ սկսած պատերազմին ելքը : Դոր ազգաց մէջ ալ մտած է ջրի աղբիւր գտնելու համար գործածել :

**ԵՐԱԳԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Վէկ պզտի տղու մը ըղունգները եղով օծել ու չորցընելէն վերջը , ծածուկ նիւթեր ծխելով գուշակութիւն կ'ընէին :

**ԵՐԱԶԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Այս հրմայութիւնս ամենեցուն յայտնի է . տեսած երազնին մեկնել տալով՝ գըլուխնին գալիքը կ'ուզեն իմանալ . ինչ պէս մինչեւ ցայսօր Տաճկըները մեծ հաւատք ունին և մեկնել կուտան :

**ԵՐԿՐԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Հողուն վրայ գիպոււածովնշաններ ընելով գուշակութիւն կը հանէին :

**ԾԱՐԹԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Ծառղթ քաշելով հմայութիւն ընել :

**ԾՈՅՏԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Ծոյտանշաններ կամ գիրեր գրելով մարդարէութիւն ընել :

Ծարաւսահացութիւն . Ծառնոց երգած եղանակէն և թռչելուն կերպէն հմայութիւն ընել :

**ԽԸԱԳԼԽԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Խշումը գլուխ կրակի վրայ խորովելով , այս տեսակ զոհով իրեւ թէ կը ստիպէին սատանաները իրենց հարցմանցը պատասխան տալու :

**ԽԱԿԱՆԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Խզնիւքարերու , ոսկի և արծաթ թիթեղներու վրայ մոգական գրեր փորած , ջրով լեցուն կոնքի կամ լեկանի մը մէջ կը ձգէին , սատանային կ'ընծայ . Էին կախարդական բառերով երդմնեցուցանելէն ետքը . ջրին տակէն օձի սուլելու նման ձայն մը կ'ելլէր՝ իրենց հարցմանցը պատասխան :

**ԽՄԿԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Ուառարանով կրակին մէջ անուշահոտ բաներ ծխելով կ'ընէին այս հմայութիւնս :

**ԾԱԽԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Օսհերէն ելած մուխերուն ձեւէն գուշակութիւն կ'ընէին :

**ՀԱՆՐԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Վայպէս կը կոչուէր այն հմայութիւնը՝ որ կ'ընէին հանդիպուած առարկաներէն . ոմանք ագռաւ , ոմանք սև կատու կամ սպիտակ հաւ հանդիպելէն կը վախնային : Հնդկաստանցիք շուտ մը տուներնին կը գառնային՝ երբոր ձամբուն վրայ օձի մը հանդիպեին :

**ՀԱՑԵԼԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Հայլիի մէջ նայելով կամնայել տալով՝ գալիքը կը մարդարէանային :

**ՀԱՏԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Վէկ բոլորածե մը կը գծէին գետնին վրայ քըսանըօրս բաժնուած . ամէն մէկ բաժանմանը վրայ մէյմէկ գիր , և գրերուն վրայ մէյմէկ ցորեն գնելէն վերջը՝ հաւ մը կը ձգէին մէջ տեղը . կենդանին ինչ կարգով ուտէր նէ ցորեն . ները՝ տակի գրերը կը նշանակէին , և անկէ ապագայն կը գուշակէին :

**ՀՐԱՀԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Հրաշաւոր դիպուածներէ , զոր օրինակ՝ քարանձրեէ , խաւարմանէ , և այլն , բարի կամչար գուշակութիւն կ'ընէին :

**ՉԵՐԱԿԱՀԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ .** Չեռքի

մէջ գտնուած գլխաւոր գծերուն՝ եօթը մոլորակաց իշխել կուտային . և այն գծերը այբուբենի առջի եօթը գրերուն նմանցընելով՝ անոնց յարմարցուցած էին : Եւ որովհետեւ ամենայն ազգաց այբուբենք մէկմէկէ կը տարբերին , հարկաւ միևնույն ձեռքէն մէկմէկու հակառակ գուշակութիւններ կ'ելլէին : Ամանք միայն աջ ձեռքին՝ ոմանք միայն ձախին և ոմանք ալերկուքին միատեղ կուտային հմայութեան զօրութիւնը :

ՄաւաչսաՅՈՒԹԻՒՆ . Մատերնուն վրայ կը կախէին մաղը . երբոր մարդու մը անուն տուած ժամանակնին՝ մաղը դառնար նէ , այն մարդուն յանցաւոր ըլլալը կը հաստատէին :

ՄաւաչսաՅՈՒԹԻՒՆ . Մոգական նշանագիրներ գրելով զանազան մանեակներու վրայ , բան կը գուշակէին :

ՄարդաւաչսաՅՈՒԹԻՒՆ . Մյուս անօրէն և զարհուրելի գուշակութիւնն մարդու մը փորը բանալով՝ աղիքը և գործարանքները քննելով կ'ըլլար : Հունաց և Հռովմայեցւոց մէջ կայսերք և թագաւորք առանց գթութեան մարդիկ և տղաք կը մորթէին՝ այսպիսի անիրաւ գուշակութիւնը նելու համար :

ՄՈՄԱՎԱՅՈՒԹԻՒՆ . Հալեցուցած մոմը ջրի վրայ կաթեցնելով՝ երեցած զանազան ձեւերէն բարի կամ չար գուշակութիւններ կ'ընէին :

ԼԵՏԱՎԱՅՈՒԹԻՒՆ . Մյուս եղանակ հմայութէ հին ատենը Մշիայի մէջ կը գործածուեր : Խաճկրներն ալաս եղանակաւ սովորութիւն ունէին պատերազմաց յաջող կամ անյաջող ըլլալը գուշակելու : Օ անազան որլաքներու վրայ պաշարելու քաղաքներուն անունները կը գրէին՝ կապարձին մէջ կը լեցընէին և կը քաշէին . ինչ կարգաւ ելլէր նէ , այն կարգաւ կը պաշարէին քաղաքները :

ԸՆԴԱՎԱՅՈՒԹԻՒՆ . ՄԵծ շրջանակի մը վրայ գրեր կը գրէին , և մէջտեղը կը դառնային , մինչև որ իսել

քերնին պրտըտելով՝ որ գրերուն վրայ որ իյնային նէ՝ անկէ յաջող կամ անյաջող գուշակութիւններ կը հանէին :

ՈՒՐՈՒՍԱՅԱՑՈՒԹԻՒՆ . Մյուս հըմայութիւնս կ'ընէին մեռելներուն հոգիքը կոչելով , ապագայից վրայ բան հարցընելու համար : Մերոն կայսրը որ մեծ հաւատք ունէր մագերուն , այսպիսի շատ կոչմունք և հարցմունք ընէլէն և մէկ բան մը իմանալ չկրնալն՝ աչքը բացուեցաւ , մագերը և մագութիւնը ուրացաւ :

ԳՐԱՅԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ . Գրին մէջ իրեք պղտիքար կը ձգէին . թէ որ քարերը կլորածե պրտըտէին , յաջողութեան նշան էր :

ՈՒԳԱՅԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ . Ու եգի , այսինքն՝ աշխատ վրայ գրեր գրելով գուշակութիւն կ'ընէին :

ՓԱԿԱՅԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ . Խնդրուածնին թղթի մը վրայ գրելով՝ փականքի կամբալիքի վրայ կը փաթթէին . և կոյս աղջկան մը ձեռքը տալով՝ գարձնել կուտային , և անկէ բան կը գուշակէին :

ՓՈՐԱՅԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ . Մյուս հմայութիւնս կ'ընէին սուտ մարգարէները , առանց պոկունքնին շարժելու՝ փորերնուն ձայն հանելով : Հիմակուան ժամանակս որովայնակոչ կամ որովայնախօս կ'ըսենք , որ մասնաւոր յատկութիւն կամ վարպետութիւն մըն է , որ խաղերու մէջ շատ մարդ տեսած է :

( Կ ԱՅԱՑՄԱՑՈՒԹԻՒՆ . Մյուս տեսակ գուշակութիւնքս կ'ըլլային՝ օդոց փոփոխութենէն , ամպերու նմանական ձեւերէն , բարի կամ չար գուշակութիւններ հանելով :

ՈՒՃԱԿ . Ու իճակ հանելով գուշակութիւնը ընելը շատ ազգաց մէջ հընուց հետեւ կերպ կերպ գործածուածէ : Մանր տախտակներու վրայ բառեր գրուած՝ ձիթենի փատէ սնտուեկի մը մէջ կը լեցնէին և տղու մը հանել կուտային : Կամ խորանարդ ( զարդ ձեռով ) փատերու վրայ զանազան ձեւեր կամ բառեր գրած էին , որոնց

նշանակութիւնը կը գտնէին մասնաւոր շինուած ցանկի մը մէջ :

՚ՈՒՍԽԱՅ կամ ՊԱՀՊԱՆԱԿ . Օ անազան տեսակ էր նուսխայից դորձածութիւնը : ՚Եկ քանի մետաղ՝ աստեղաց այլ և այլ զուգընթացութեժամանակ հալելով, և վրան նշանակիրեր գրելով կ'ըլլար : ՚Իմայ ալ Տաճկըները խիստ կը յարգեն վէկը սուած մատնին, որուն վրայ և մէջի կողմը պատշաճ ժամանակով (այսինքն էլք առաջանակ) գրեր և նշանագիծեր փորել կուտան : ՚Պղտի տղաք չար աչքէ պահելու համար՝ դիտոր, պաղեղ և օձի լեզու կարծուած քար մը կը կախեն : ՚Մանց նուսխայից կուտային զօրութիւն գալիքը իմանալու ումանց՝ հիւանդութենէ ըռընտցընելու, վնասակար կենդանիներէ և դիւթութենէ ազատ պահելու, կամ ցան կութիւն գրգռելու, կամ իշխանաւորի մը աչքը մտնելու :

՚Դոհարեղինաց ալ զանազան պահապան զօրութիւն կուտային : ՚Մանք ակռայի ցաւէ ազատելու համար՝ կուրծքերնուն վրայ ձիու կամ իշու ակռայ մը կը կախէին : ՚Մանք ալ բաղդատոր ըլլալու համար՝ օձի շապիկ վրանին կը կրէին : ՚Այսպիսի աւելորդապաշտութեանց վերջը չէր իգար, թէ որ ամէնն ալ ուզէինք հոս նշանակել :

՚Այս վերոյգրեալ հմայութեանց համառօտ ցանկին վրայ աչք մը դարձնելով՝ կարդացողը բացայացտ կը տեսնէ թէ որչափ ննջն բաներով մարդս խաթուերէ : ՚Լուսի, ինչպէս վերը ըսինք, այս՝ գիտութեամբ ծաղկեալ դարուս մէջ, և քրիստոնէական լուսով լուսաւորեալ ժամանակս, ամօթ և մեղք է հաւատք ընծայել այս պիսի բաներու, որոնց իրաւը միայն ՚Կամուած կրնայ ընել : ՚Վ կրնայ, բաց ՚ի նմանէ՝ և որուն որ ինքյայտնել կ'ուզէ, գալիքը իմանալ : ՚Նչ կարօղ է մարդս հմայեկ շինելով՝ մէկը մէկալը կապել . պառկի մը մէջ զանազան նիւթեր եփելով՝ հեռու

քաղքէ բռնութեամբ մարդը քովը բերել . մարդու աչքը կապելով՝ ուզածը ցուցընել, ուզածը աներեւյթընել . գլխանոց մը գլուխը անցընելով՝ ամէն տեղ պրտրտիլ, և մէկու մը չերենալ . և այն : ՚Կոնց սքանչելիք և հրաշք կ'ըսենք . և հրաշքը միայն ամենակարօղ զօրութեանը իշխանութեան տակն է . և մահկանացուի մը մեծ յիմարութիւն և անօրէնութիւն է : ՚Կամուծոյ զօրութեանը ինքը զինքը հաւասար կարծել : ՚Կ բաներուս հաւատալու համար՝ պէտք է կամ խենթ ըլլալ, կամ զԿամուած ուրանալ :

\* \*

### Ա Ռ Ա Կ

#### Ա Է Ւ Լ Մ Ա Հ :

“ ՚Վ զըրջնովկ սասան չար, Յերբ լըլիցես զեղիելիս ”  
Ասէր ալեւը վըշտահար  
Առ մազն ՚ի գառըն ըալիս :  
Եւ զայս ցալիւը մազն ասէր .  
“ Բայց լըլիովդ և մաքրիս ”  
Մէ դու զքըննիչդ անդոսներ  
Թէ լաւանալ կամիցիս :

#### Պ Ա Խ Ա Հ Ա Ր Ե Լ Ի Տ :

Կռն պառաւ ձօն Ասարզիան ետ զհայելին .  
“ Ոչ ես, ասէ, պէտս ինչ ունիմես սըմին .  
Զինչ էին՝ գա ոչ կարէ ինձ ցուցանել,  
Եւ զոր ինչ եմ արդ ոչ կամիմ տեսանել ” :